

ԿԱՐԾԻՔ

Տ. Արարատ քահանա Պողոսյանի «Հայոց եկեղեցին ԺԶ-ԺԷ դարերի Հայ ազատազրական պայքարում» պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբնապարբերություններից, գրականության ցանկից և հավելվածից: Ամբողջ շարադրանքը կազմում է 159 էջ, իսկ հավելվածի հետ՝ 180 էջ:

Ներածության մեջ (էջ 3-13) ատենախոսության հեղինակի կողմից հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում է աշխատանքի հիմնական նպատակներն ու խնդիրները, պարզաբանվում է գիտական նորույթը, հիմնավորվում է աշխատանքի գործնական նշանակությունը, տրվում են թեմայի ժամանակագրական սահմանները և օգտագործված աղբյուրների ու գրականության համառոտ տեսությունը, ինչպես նաև աշխատանքի մեթոդաբանությունը: Հեղինակը փաստում է, որ ներկայացվող ժամանակահատվածում Հայոց եկեղեցին եղել է ազգի հոգևոր և քաղաքական իշխանության կրողը՝ լինելով հայ ինքնության հիմնայուներից մեկը:

Նշվում է ատենախոսության նպատակը՝ նորովի ուսունասիրել ու արժնորել Ս. Էջմիածնի տեղն ու դերը ԺԶ - ԺԷ դարերի ազատազրական պայքարի հոլովույթում՝ օգտագործելով Հայոց պատմության և Հայոց եկեղեցու պատմության առանցքային նյութերը:

Ներկայացված են թեմայի գիտական 4 խնդրները.

ա) տալ ԺԶ - ԺԷ դդ. հայ ազատազրական պայքարի գաղափարական հիմքերը և նպաստող հանգամանքները,

բ) վեր հանել Ս. Էջմիածնի 1547 թ. և Սեբաստիայի 1562 թ. խորհրդաժողովների արդյունքները և Աբգար դպիր Եվդոկացու (Թոխատենցու) բանագնացությունը,

գ) լուսարանել Հակոբ Դ Զուլայեցի կաթողիկոսի հայ ազատազրական պայքարի ողղությամբ իրականացրած գործունեությունը 1655-1674 թթ.,

դ) բացահայտել Հակոբ Դ Զուլայեցի կաթողիկոսի 1677-1680 թթ. գործունեությունը և հարակից այլ հարցերը:

Թեմայի ժամանակագրական շրջանն ընդգրկում է 16-րդ դարի երկրորդ կեսից մինչև 17-րդ դարի 80-ական թվականների տեղի ունեցած իրադարձությունները, որոնք առնշվում են Հայոց կաթողիկոսների հայ ազատազրական պայքարի ուղղությամբ իրականացրած գործունեությանը: Մեթոդաբանական հիմքը կազմում են պատմության հետազոտման պատմահամեմատական, պատմաբննական, վերլուծական և համադրական մեթոդները:

Աշխատանքում հիմնավորված է ատենախոսության գիտական նորույթը՝ ցույց տալ Ս. Էջմիածնի, ի դեմս կաթողիկոսների, ներդրումը հայ ազատազրական, կազմակերպ-

շական և գաղափարական պայքարում, ինչպես նաև քաղաքական կողմնորոշման ասպարեզում: Վերհանել 16-17-րդ դարերի հայ ազագրական պայքարում Հայոց եկեղեցու դերակատարման հիմնահարցը:

Ուսումնասիրության աղբյագիտական հիմքն են հանդիսանում տարաբնույթ արխիվային նյութերը՝ Հայաստանի, Ռուսաստանի արտաքին քաղաքականության և Վատիկանի գաղտնի գրասենյակի: Աշխատանքում նորովի քննության են առնված 16-17-րդ դարերի վավերագրերը, հրապարակված և վերլուծված ոչ Առաքելական եկեղեցու հետնորդների կողմից, այլ Կաթոլիկ եկեղեցու տեսանկյուններով: Ատենախոսության թեման ներկայացվող դիտանկյունից և ժամանակագրությամբ նախկինում հետազոտման չի ենթարկվել: Նրա արժեքն ապահովում են հայագիտական և արտասահմանյան՝ ոռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով գիտական շրջանառության մեջ դրված սկզբնադրյուրների մեծածավալ նյութերը և ուսումնասիրությունները: Անշուշտ, ատենախոսության հեղինակի կողմից, այս նպատակադրումն ողջունելի է: Հետևապես հիմնավորված է գիտական նորույթը, իսկ հետազոտությունն իր տեսակի մեջ առաջին փորձն է:

Ատենախոսության համար առանձնահատուկ կարևորություն ունեն ժամանկի հայ և օտար մատենագիրների աշխատությունները: Նրանք դասակարգվում են երկու տեսակի՝ հայ և օտար լեզուներով: Այս ամենն ապահովում է ատենախոսության գործնական-կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլուխը կոչվում է «ԺԶ-ԺԵ դարերի հայ ազատագրական պայքարի գաղափարական հիմքերը և նպաստող հանգամանքները», որը բաղկացած է երեք ենթագլխից (Էջ 14- 35):

Առաջին ենթագլուխը (Էջ 12-23) նվիրված է «Խաղաղության և պատերազմի ընկալումներն Աստվածաշնչում և եկեղեցում»: Նշվում է, որ քրիստոնեության մեջ ազատության սկզբունքն ունի էական դեր: Միաժամանակ Հայ եկեղեցին մշտապես մերժել է պատերազմները և արյունահեղությունը: Սակայն, արդար է համարում հանուն քրիստոնեական արժեքների և հայրենիքի պաշտպանության համար:

Երկրորդ ենթագլխում ներկայացված են «ԺԶ-ԺԵ դարերի հայ ազատագրական պայքարի գաղափարական հիմքերը» (Էջ 23-25): Նշվում է, որ XVI և XVII դարերի ազատագրական պայքարում Հայոց եկեղեցին գործել է «վասն հավատո և վասն հայրենեաց» նշանաբանով, ինչն արդարացնում է նրա մանսակցությունն ազատագրական պայքարում:

Երրորդ ենթագլխում, որի վերնագիրն է «ԺԶ-ԺԵ դարերի հայ ազատագրական պայքարի նպաստող հանգամանքները» (Էջ 25-35), ներկայացվում և վերլուծվում են հայ գաղթավայրերի մասնակցությունն ազատագրական պայքարում: Տրված են նրա երեք ձևերը. 1) զալ Հայաստան և մասնակցել պայքարին, 2) նյութական աջակցություն և ծրա-

գրային պայքար եվրոպական գաղափարների տարածմանը հայկական միջավայրում, 3) մասնակցություն հակառամանյան պայքարին:

Այս առումով, իրենց դերն ազատագրական պայքարում ունեին ուխտագնացությունները, հայկական տպագրությունը և ԺԶ դարի ազատագրական պայքարը: Բնականաբար կարևոր Ս. Էջմիածնի դերն է, որպես ԺԶ-ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարի կենտրոնի: Դժվարությունն այն էր, որ Հայաստանը բաժանված էր Օսմանյան Թուրքիայի և Պարսկաստանի միջև: Արդյունքում, ոչ տեղի հայությունը, ինչպես նաև Կիլիկիայի Հայաստանի իշխանական տներից ոչ մեկը չկարողացավ իրականացնել միավորիչ դերը (Եջ 30): Այս պայմաններում ԺԶ-ԺԷ դարերում Ս. Էջմիածնի կաթողիկոսները սկսեցին զբաղվել ոչ միայն եկեղեցական և մշակույթային կյանքով, այլ նաև ազատագրական պայքարով: Դրան նպաստեց հայրապետական Աթոռի 1441 թ. Սսից Ս. Էջմիածին վերհաստատումը: Առանձնահատուկ կապեր են ստեղծվում նվիրապետական աթոռների հետ՝ Գանձասարի, Ալբամարի, Սահ կաթողիկոսությունների. Կ. Պոլսի և Երուսաղեմի պատրիարքությունների: ԺԶ-ԺԷ դարերում Ս. Էջմիածինը դառնում է հայ մտավոր շարժման և վերածննության շահակիրը:

Ատենախոսության երկրորդ գլուխում «Սուրբ Էջմիածինը 1547 թ. և Սեբաստիայի 1562 թ. ժողովների նշանակությունը ԺԶ դարի հայ ազատագրական պայքարի ծրագրերում» ունի պատմաբնական և վերլուծական բնույթ, որը ճշգրտում է այս կամ այն պատմական դեմքերի կենսագրությունը, գործունեությունը և վաստակը: Առավել ևս դա վերաբերվում է Հայոց կաթողիկոսներին՝ որպես ազատագրական շարժման կազմակերպիչներ:

Այս գլուխն (Եջ 36 -78) ունի երկու ենթագլուխ: Առաջին ենթագլխում դիտարկվում են հետևյալ խնդիրները. ա) «Ս. Էջմիածն 1547 թ. խորհրդաժողովը և դրա արդյունքը» (Եջ 36-49), բ) «Սեբաստիայի 1562 թ. խորհրդաժողովը և Արքար դպիր Եվդոկացու (Թոխատեցու) բանագնացությունը» (Եջ 49-78): Ներկայացված է կաթողիկոս Ստեփանոս Սալմասեցու (1545-1567) նախաձեռնությամբ գումարված խորհրդաժողովի կարևորագույն դերը համակարգված պայքար սկսելու, օտարի լծից ազատվելու գաղափարը, որով սկսեց առաջնորդվել հայ ազատագրական պայքարը: Այստեղ քննարկվում են ժողովի մասնակիցների խնդիրները, ճշգրտվում են Ստեփանոս և Սալմասեցու ծննդավայրը, նրա նույնացումը «Առնջեցի» կաթողիկոսի կամ տարբեր անձերի անվան հետ Եվրոպա մեկնող պատվիրակության կազմը և գործնեությունը: Ներկայացված են բանակցությունները Հռոմում, Գերմանիայում, Լեհաստանում և Մոսկվայում: Իրականացվել է նյութի պատմաբնական վերլուծությունը:

Երկրորդ ենթագլխում հեղինակը սահմանում և քննութան է ենթարկում Սեբաստիայի 1562 թ. խորհրդաժողովը, որը ելնելով գաղտնապահությունից տեղափոխվեց Էջմիածնից Օսմանյան կայսրության տարածք:

Ներկայացված են աշխարհաքաղաքական վիճակը Հայաստանում 1550-1560-ական թվականներին, հայության համար տնտեսական և կրոնաքաղաքական ծանր իրավիճակով: 1555 թ. մայիսի 29-ին կնքված Ամասիայի պայմանագրով Հայաստանը հերթական անգամ բաժանվում է երկու հատվածի՝ արևմտյան և արևելյան:

Այնուհետև պայքարի դրոշն անցնում է կաթողիկոս Միքայել Սեբաստացուն (1567-1576), որը մինչ այդ եղել է աթոռակից 1557 թ. կաթողիկոս Ստեփանոս Սալմասեցուն: Նա կարողացավ իր ազդեցության տակ դնել Աղվանքի և Ախթամարի կաթողիկոսներին, իսկ Շահ Թահմազից ստանալ «հաստատուն հրամանքները», ապահովելով Ամենայն Հայոց կաթողիկոսության իրավունքները: Բերվում են համապատասխան տեղեկություններ: Ատենախոսն ուշադրություն է դարձրել կաթողիկոսի ծննդավայրի և «Սեբաստացի» անվան խնդրին:

Վերլուծության է ենթարկվել 1562 թ. ժողովի պահպանված վավերագրերի բովանդակությունը և գումարման խնդիրը, ժողովի մասնակիցների կազմը, ազատազրման ենթակա տարածքների հարցը: Վերջինս նախատեսնում էր Հայաստանի ամբողջական ազատգրումը: Ատենախոսը վերլուծում է պատվիրակության գործունեությունը և բանակցւթյունների ընթացքը Հոռմում, քանզի Միքայել կաթողիկոսի 1563 թ. Պիոս Դ պապին ողղված նամակը հետաքրքրություն առաջացրեց: Գլխի վերջում ամփոփվում է, Արևմուտքի օգնությամբ ազատազրվելու փորձը, որը չհաջողվեց, քանզի թե՝ հայկական կողմի և թե՝ Արևմուտքի միջև չմշակվեց «հատուկ ծրագիր»: Պատճառը եղել է ոչ թե քաղաքական, այլ կրոնական:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացվում և մանրամասն քննության են առնվում Հակոբ Դ Չուլայեցի (1655-1680) կաթողիկոսի գործունեությունը հայ ազատազրական պայքարում: Այս գլուխն (էջ 79 -129), ունի երկու ենթագլուխ:

Առաջին ենթագլուխում ներկայացվում է կաթողիկոսի գործունեությունը 1655-1674 թթ. ուղղված Հայաստանի ազատազրմանը: Հեղինակը տալիս է հետազողների մոտեցումը, որոնք բնորոշում են դարի բովանդակությունը տարանջատելով երկու շրջան՝ առաջին քարրորդը ներքին և արտաքին բարենպատ պայմանների սպասողական շրջան և թե՝ վերազարթոնքի շրջան, որը մեծ ազդեցություն թողեց Հայոց եկեղեցու և հայ ժողովրդի պատմության ընթացքին: Քննարկվում է հայ ազատազրական պայքարի արտաքին կողմուրոշման հարցը: Խնդիրը նրա նրանում էր, որ 1618-1648 թթ. Եվլոպայում ընթանում էր պատերազմ, կապված ազգային պետությունների ձևավորման գործըացի հետ: Դարի երկրորդ կեսում նրանք սկսում են էական դեր խաղալ արևմտյան և արևելյան (ի դեմս Ռուսաստանի) Եվլոպայի միջազգային հարաբերություններում: Մինչ դեռ Պարսկաստանը և Օսմանյան կայսրությունը մարտնչում էին տարածաշրջանում: Նրանց նկատմամբ արևմտյան երկրների թշնամական կեցվածքը և ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը ոգեշնչում է հայ հոգևորականներին, որ քրիստոնեական երկրները կօգնեն

հայ ազատագրական պայքարին: Դրա մասին է վկայում Հակոբ Դ Զուղայեցի կաթողիկոսի 1661 թ. նամակը Հռոմի Ալեքսանդր I պապին:

Այսուհետև, Վերլուծվում է ոռուսական ցարին՝ Ալեքսեյ Սիբայելովիչին ուղղված նամակը, որի էջությունն էր օգնություն ցացարերել հայությանը: Տրվում է ատենախոսի մեկնաբանությունը: Սակայն, Ռուսաստանը դեռևս զբաղված էր ինքնահասատման խնդրով: Այս պայմաններում ծավալվում է Հակոբ Դ Զուղայեցու նամակգրությունը Հռոմի Ալեքսանդր I պապի հետ: S. Արարատ քահանա Պողոսյանը հիմնավորում է, որ Հռոմի պապերը ի զորու չեին դեպի Արևելք խաչակրաց նոր արշավանք կազմակերպել (Էջ 103):

Երկրորդ ենթագլխուր՝ պարունակում է Հակոբ Դ Զուղայեցու 1677-1680 թթ.¹ գործունեությունը (Էջ 111-129) համաձայն հայ ազատագրական պայքարի ուսումնասիրման համատեքստում: Այստեղ կարևորվում է 1677/1678 թթ. գաղտնի ժողովը U. Էջմիածնում և նրա հետ մի քանի հարցեր՝ թվական խնդիրը, մասնակիցները և քանազնացները: Ատենախոսոր ճշգրտում է կաթողիկուսի քանազնացության կոնստանդնապոլսյան շրջանի հանգամանքները, որի նպատակն էր մի կողմ դնել տարածայնություններն ազագային պայքարի ասպարեզում և համախմբվել «վեհ գաղափարի շուրջը», ինչը տեղի չունեցավ:

Եզրկացության բաժնում տրված են ատենախոսության հիմնական դրույթները և եզրկացությունները հոգևոր դիտանկյունից: Հավելվածում ներկայացված են Վատիկանի արխիվի նյոթերը:

Հստ արժանվույն գնահատելով կատարված դրական աշխատանքը, կցանկանայինք ներկայացնել ատենախոսության մասին հիմնական դիտողությունները:

1. Մեր կարծիքով, ներածության մեջ հարկ էր ներկայացնել հայ և օտար հեղինակ-ների հայացքները ժամանակագրական սկզբունքով:
2. Խոսելով միավորիչ դերի և ուժի նշանակության մասին (Էջ 30) կարելի է նշել սարդար Ռուստամ Օրբելյանի որոշակի դերակատարությունը: Նմանպես կարևոր է Ախրամարի կաթողիկոս Ստեփանոս Գ կողմից «քազավոր» օծելը 1465 թ. Սմբատին, որը իր փոքրիկ տիրույթում իշխեց մինչև 1481 թ.:
3. Անհրաժեշտ է 17-րդ դ. սկզբի սպասողական շրջանի բնութագրման համար ներկայացնել Սյունյաց անապատի շարժումը, առավելս, որ Հակոբ Դ Զուղայեցին նրա կարկառուն ներկակացուցիչն է եղել:
4. Լավ կլիներ, եթե ազգային ազատագրական պայքարում կաթողիկոսների և հոգևորականության առաջտար դերի հետ ներկայացվեին այլ սոցիալական խավերի ներկայացուչիների օժանդակ դերը՝ դովլաթավորները, խոջաները և այլն;
5. Պետք էր անդրադառնալ նաև U. Էջմիածնի և Գանձասարի պատրիարքության համագործակցությանը ոռուսական կողմնորոշման հարցում:

¹ Տպագիր օրինակում առկա է վորագիր՝ նշվում է 677-1680 թթ.:

Այնուհանդերձ, նշված դիտումները չեն նսեմացնում S. Արարատ քահանա Պողոսյանի գիտական ուսումնասիրության արժանիքները: Քննարկման ներկայացված ատենախոսությունն աղբյուրագիտական խորը և բազմակողմանի ուսումնասիրություն է:

S. Արարատ քահանա Պողոսյանի կողմից հրապարակած գիտական հոդվածներն ու սեղմագիրը համապատասխանում են հետազոտության բովանդակությանն ու ատենախոսությունում արձարձված հիմնական դրույթներին: Աշխատանքը շարադրված է գրագետ, պահպանված են խնդրի լուսաբանման հաջորդականության ընդունված կանոնակարգերը:

S. Արարատ քահանա Պողոսյանին հաջողվել է ստեղծել գիտական աշխատանք, որը լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Ըստ այդմ, միջնորդում ենք ԲՈԿ-ի Հայոց պատմության 004-ի մանագիտական խորհրդին նրան շնորհել իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
առաջատար գիտաշխատող, պ.գ.դ., պրոֆեսոր *Հ. Բույնչ* Խալերի Գեղրգի Թունյան

Հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի

գիտքարտուղար պ.գ.թ., դոցենտ

15 օգոստոսի, 2023 թ.

Հ. Ղ. Առւրարյան

